ՔԱՂՎԱԾՔ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Քարաշամբի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 10.03.21թ. թիվ 8 արտահերթ նիստի արձանագրությունից.

Օրակարգում՝

1. «Քարաշամբի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին:
   Հաղորդող՝ կառավարման խորհրդի նախագահ՝ Զ. Խլղաթյան

2.Հավակնորդների հայտերն ընդունելու համար կառավարման խորհրդի երկու անդամների լիազորելու մասին:

Հաղորդող՝ կառավարման խորհրդի նախագահ՝ Զ. Խլղաթյան

Լսեցին 1. «Քարաշամբի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին:

Հաղորդող՝ կառավարման խորհրդի նախագահ՝ Զ. Խլղաթյան

2. Հավակնորդների հայտերն ընդունելու համար կառավարման խորհրդի երկու անդամների լիազորելու մասին:

Հաղորդող՝ կառավարման խորհրդի նախագահ՝ Զ. Խլղաթյան

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման մեջ կատարված փոփոխություններով՝ դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու կարգը՝ հաստատության կառավարման խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. «Քարաշամբի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր տեղի համար հայտարարել մրցույթ:

2. Լիազորել խորհրդի երկու անդամներին՝ Մելանյա Հարությունյանին և Կարմեն Մարտիրոսյանին, հավակնորդների հայտերն ընդունելու համար:

Կառավարման խորհրդի նախագահ՝ /Զ. Խլղաթյան/

Իսկականի հետ ճիշտ է:

Խորհրդի քարտուղար՝ /Մ. Հարությունյան /

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի «Քարաշամբի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 6-րդ և 7-րդ կետերի համաձայն Կոտայքի մարզի «Քարաշամբի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը:
2. Հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1. Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով:
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի պատճենը:
3. Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը:
4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը նաև էլեկտրոնային տարբերակով:
5. Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում):
6. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ անհատական հաշվից քաղվածքի պատճենը և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են «Քարաշամբի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում. հասցեն՝ Կոտայքի մարզ գյուղ Քարաշամբ 2-րդ փող. 5-րդ փակ. շենք 1:

Փաստաթղթերն ընդունվում են 2021 թվականի մարտի 15-ից մինչև ապրիլի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա ապրիլի 16-ին՝ ժամը 14:00-ին, «Քարաշամբի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում. հասցեն՝ Կոտայքի մարզ գյուղ Քարաշամբ 2-րդ փող. 5-րդ փակ. շենք 1:

Տեղեկությունների համար դիմել՝ 098 01 08 02, 077 04 50 94, (0224) 6-13-43, հեռախոսահամարով և 2017agaxax@mail.ru, m.harutyunyan71@mail.ru :